

տէ Լեհաստանի հայ եկեղեցւոյ մասին զբեւ
ուղղակի Սրբոյ Պապին, զոր կը դաւանի
Գերազոյն Պետ Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ
Յաջորդ Պետրոս Առաքեալին: Կը զանգատի
որ Լեհաստանի հայոց մէջ շատ խռովու-
թիւններ կան տակաւին, հակառակ որ անց-
եալին, տեղւոյն հայ Վիճակաւորը, Թորո-
սովիչ, հաշտութեան պայմանագիր մը կըն-
քած էր ժողովրդեան ներկայացուցիչներուն
հետ, նախորդ Կաթողիկոսին՝ Փիլիպպոսի
առջեւ: Հաշտութիւնը տեւեց մինչեւ մեր
օրերը: Սակայն այժմ նոյն Եպիսկոպոսը
դարձեալ խռովութիւն կը սերմանէ ժողո-
վրդեան մէջ, ստիպելով որ ջրախառն բա-
ժակով պատարագ մատուցուի: Գիտեմ,
կ'ըսէ, Ձեր Սրբութեան կամքը չէ որ այս
պատճառաւ խռովութիւն ըլլայ հայ եկեղեց-
ւոյ մէջ: Ձեզի զրկեցինք, կը յարէ, Միջա-
դեաքի Յովհաննէս Արքեպիսկոպոսը. կը
խնդրենք որ զինք ձեռնունայն չձգէք, այլ
կատարէք մեր խնդրանքը, եւ դէք սոյն
Եպիսկոպոսին, որ տեղւոյն հայ եկեղեցին
պահէ մեր հին աւանդութեան եւ ճշման մէջ:
Սակայն եւ այնպէս, Ձեր Վեհութիւնը ու-
ղածին պէս թող տնօրինէ: Հուսի ուրեմն
չնորհակալութիւն կը յայտնէ Սրբոյ Պա-
պին նուիրած շքեղ սկիհին համար. եւ կը
խնդրէ Աստուծոյն որ երկարաձիւղ տարիներ
պարզեւէ նորին Սրբութեան:

Այս նամակին լատիներէն թարգմանու-
թիւնն ունինք: Ձայն եւս մեզի տրամադրեց
Գեր. Գրիգոր Վրդ. Բեղրովիչ: Գրութեան